2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքի N2 հիմնական դպրոցի ՆԶՊ ուսուցչի աշխատանքային հաշվետվություն

Ուսուցիչ՝ Հ. Ասրյան

- Առաջնորդվելով ԿԳՍՄՆ նախարարության հաստատած չափորոշչային պահանջներով, ստեղծել եմ տարեկան թեմատիկ պլան և ներկայացրել հաստատման:
- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծել եմ բարենպաստ պայմաններ ,միջավայր,համապատասխան կահավորում:
- Ամրացնել եմ փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
- Աշակերտների մեջ խորացրել եմ սերը ուսման,հայրենիքի,դպրոցի նկատմամբ:Սերմանել եմ աշխատասիրություն,պարտաճանաչություն,և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել եմ գնահատել սեփական արարքները,նկատել իրենց և ընկերների թերությունները,ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակել եմ հարգանք մեծերի նկատմամբ,ուշադրություն՝ փոքրերի:
- Կարևորել եմ անձնական հիգիենան և մաքրասիրությունը:

▪Զնավորել եմ բարոյական արժեքներ, որոնք պետք է դառնան աշակերտների հասունության և վարքի հիմքը: Օրինակ եմ բերել տարբեր սերունդների բարոյական փորձը, ուսումնասիրել ենք հանճարների կյանքը, գաղափարները իրականացրել ենք սեփական արարքների քննադատական վերլուծություն ու գնահատում հարցաթերթիկների , թեստերի միջոցով:

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները>

▪Զնավորել հայրենասեր,ազգանվեր,կրթված,ընկերասեր,անձնազոհ անհատներ՝ պատրաստ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և առաջ շարժվելու

2022-2023 ուստարվա համար ստեղծվել և հաստատման եմ ներկայացվել տարեկան թեմատիկ ծրագիրը:
Առաջին և երկրորդ կիսամյակներում կազմվել և տրվել են նաև գործնական աշխատանքներ;
Օգոստոսին մասնակցել եմ զինղեկների եռօրյա դասընթացի:Կազմակերպվել է 8-ցիների երդման արարողությունը, բացվել է դասասենյակ մերօրյա հերոս Ռաֆայել Ղազարյանի անվամբ:Հայոց բանակի տոնին նվիրված կազմակերպվել է 8-րդ և 9-րդդասարանների միջև ռազմամարզական խաղեր:Ուստարվա ընթացքում նախակոչիկների հետ տարվել է նախապատրաստական աշխատանքներ:Ուստարվա ընթացքում անց են կացվել ուսումնական տագնապներ՝ տարբեր ուղվածություններով և իրականացվել դպրոցի աշակերտների և անձնակազմի տարհանում և պատսպարում,վեր են հանվել թերությունները ,շտկվել :Զորամասի հետ կազմվել է համատեղ աշխատանքային պլան՝ հայրենադաստիարակչական և առաջնորդվել դրանով:Մշտապես պահպանվել է կապը զինկոմիսարիատի և արտակարգ իրավիճակների ստորաբաժանումների հետ:<<Պատանի հրշեջ>> փրկարարների հետ անցեմկացրել պարապմունքներ՝ մասնակցելու մարզային մրցույթին, որը չկազմակերպվեց պատկան մարմինների կողմից:Մասնակցություն ենք ունեցել <<Պատանի հրաձիգ>>մարզային մրցույթին:
Աշխատանք եմ տարել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:
Կատարվել են փոխադարձ դասալսումներ:
120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի քննություն:
Բոլոր դասարաններում կատարվել են ծրագրերը: